Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

2019թ. սեպտեմբերի 20-24-ը, ԱՄՆ, Նյու-Յորք

4. Հրավիրող կողմը.

ՄԱԿ Գլխավոր վեհաժողով

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Այցի նպատակն էր մասնակցել ՄԱԿ Գլխավոր Վեհաժողովի 74-րդ նստաշրջանի շրջանակներում կազմակերպվող Համընդհանուր առողջապահական ծածկույթի խնդիրներին վերաբերող բարձրաստիճան գագաթաժողովին:

6. Քննարկված թեմաները.

Քննարկվեցին երկրներում համընդհանուր առողջապահական ծածկույթին հասնելու խնդիրներին առնչվող քաղաքական հռչակագրի դրույթները և վերջինիս շրջանակին վերաբերող կազմակերպական հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Այցի ընթացքում երկկողմ հանդիպումներ տեղի ունեցան տարբեր երկրների բարձրաստիճան ներկայացուցիչների, առողջապահության նախարարների հետ: Վերջիններիս հետ քննարկվեցին առողջապահության ոլորտում երկկողմ համագործակցության հարցեր: Ուրուգվայի առողջապահության նախարարի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց խորացնել համագործակցությունը հանրային առողջության ոլորտում, մասնավորապես դրական գնահատելով Ուրուգվայի դրական փորձը ծխելու դեմ պայքարում: Ուրուգվայի առողջապահության նախարարը հրավեր հղեց ՀՀ առողջապահության նախարարին՝ 2020թ. այցելելու Ուրուգվայ:

Համաժողովի ընթացքում ելույթով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը՝ համընդհանուր առողջապահական ծածկույթին առնչվող հարցերում Հայաստանի մոտեցումների վերաբերյալ: Հայաստանը պաշտպանեց համընդհանուր առողջապահական ծածկույթին վերաբերող քաղաքական հռչակագիրն ընդունելու անհրաժեշտությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հայաստանը, ելույթով հանդես գալով, ներկայացրեց իր դրական դիրքորոշումը քաղաքական հռչակագրի ընդունման հարցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Մասնակից անդամ պետությունների ներկայացուցիչները ջանքեր են ներդնելու ստանձնած պարտավորություններն իրականացնելու ուղղությամբ: Երկկողմ հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց համագործակցող կողմերի միջև ամրապնդել փոխգործակցությունն ու կապերը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. սեպտեմբերի 27